

**ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ (IFB)**

**Հայաստանի Հանրապետություն**

**Կենսական Նշանակության Դանապարհների Բարելավման Երկրորդ Լրացուցիչ Ֆինանսավորման Ծրագիր  
Ծրագիր-ID No.: P121287**

1. Սույն Հայտերի Ներկայացման Հրավերը հաջորդում է սույն Ծրագրի համար հրապարակված Ծրագրի Գնումների Ընդհանուր Ծանուցմանը, որը գետնադրվել է «Development Business» և «DgMarket» էլեկտրոնային էջերում 2010թ. փետրվարի 26-ին:
2. Հայաստանի Հանրապետությունը փոխառություն ստանալու համար դիմել է Վերակառուցման և զարգացման միջազգային բանկին (IBRD) «Կենսական Նշանակության Դանապարհների Բարելավման Երկրորդ Լրացուցիչ Ֆինանսավորման» ծրագրի ծախսերը հոգալու համար և նախատեսում է օգտագործել այդ միջոցների մի մասը **ստորև ներկայացված** ճանապարհային հատվածի անհրաժեշտ վճարումները կատարելու համար: Ծրագիրը իրականացվելու է Համաշխարհային բանկի և Հայաստանի Հանրապետության համատեղ ֆինանսավորմամբ: Մրցութային գործընթացը իրականացվելու է ՀԲ-ի կողմից սահմանված իրավասության կանոնների և ընթացակարգերի պահանջների պահպանմամբ:
3. ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության «Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը հրավիրում է ներկայացնել փակ հայտեր իրավասու և որակավորման չափանիշներին համապատասխանող հայտատուների կողմից՝ **ստորև ներկայացված** ճանապարհային հատվածի վերանորոգման աշխատանքներն իրականացնելու համար: Աշխատանքները ներառում են հին հիմքի քանդում և նորի կառուցում, փոսային նորոգում, հարթեցնող շերտի տեղադրում, ասֆալտ-բետոնե ծածկի կառուցում, դրենաժի իրականացում, ճանապարհային անվտանգության ապահովման աշխատանքներ և այլն: Շինարարական աշխատանքները պետք է ավարտել մինչև 2010թ. դեկտեմբերի 15-ը:
4. Մրցույթը կիրականացվի Համաշխարհային Բանկի կողմից ընդունված «Ուղեցույցներ: ՄՁՎԲ փոխառությունների և ՄՁԸ վարկերի շրջանակներում գնումներ»-ով (2004թ. մայիս ամսին ընդունված, հետագայում 2006թ. հոկտեմբեր ամսին լրամշակված խմբագրությամբ) սահմանված գործընթացների կազմակերպմամբ՝ Ազգային Մրցակցային Մրցույթի եղանակով: Մրցույթը բաց է Մրցութային փաստաթղթերով սահմանված իրավասու երկրների ծագում ունեցող բոլոր հայտատուների համար:
5. Ծահագրգիռ և իրավասու մասնակիցները կարող են լրացուցիչ տեղեկություններ ձեռք բերել «Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկից (դիմել գնումների գլխավոր մասնագետ՝ պրն. Գ. Հայրապետյանին, հեռ: +374 10 580 523, էլ.փոստ: dhairapetyan@transportpiu.am) և ուսումնասիրել դրանք ստորև նշված հասցեյում՝ բոլոր աշխատանքային օրերին ժամը 09:00-ից մինչև 17:00:
6. Որակավորման չափանիշները ներառում են.

Պայմանագրի անվանումը	Հայտատուի պարտադիր պետք է ներկայացնի մրցույթի մասնակցության բանկային երաշխիք, որի գումարը պետք է կազմի /ՀՀ դրամ/	Պայմանագրի շնորհմանը հավակնող հայտատուի պետք է ունենա վերջին հինգ տարիների ընթացքում նմանատիպ բնույթի աշխատանքների կատարման փորձ՝ ճանապարհների շինարարության/վերականգնման առնվազն մեկ շինարարական պայմանագիր, որի արժեքն առնվազն պետք է կազմի /ՀՀ դրամ/	Պայմանագրի շնորհմանը հավակնող հայտատուի պետք է ունենա այլ պայմանագրային պարտավորություններից ազատ ընթացիկ միջոցներ կամ վարկային գծեր, որոնց արժեքն առնվազն պետք է կազմի /ՀՀ դրամ/
ՁՅՄՅ ԿՅ . Շճ CW-NCB-11/AF2-2010 Զ . ՅճՅ Ի - Ի Յճճ ԿՅ ԻՄՕ+000-ԻՄ4+040	12,000,000	582,000,000	291,000,000

**Պայմանագրի շնորհմանը հավակնող մասնակիցը պայմանագրի կատարման համար պետք է ունենա հետևյալ սարքավորումները՝ յուրաքանչյուր պայմանագրի համար.**

- Ասֆալտաբետոնային գործարան => 30տ/ժամ արտադրողականությամբ – 1 հատ
- ավտոգրեյդեր – 1 հատ
- սարքավորում փոսային նորոգման համար – 1 հատ
- 9/12 տ պլանդոզեր – 1 հատ
- 10/13տ մետաղական գլոբն – 1 հատ
- 6/8 տ մետաղական գլոբն – 1 հատ
- 10/13տ թրթռագլոբն – 1 հատ
- հիդրավլիկ կամ պլանատիկ գուրդոնատոր – 1 հատ
- ասֆալտատեղադրիչ => 3մ կարգավորվող լայնությամբ և հարմար մեծածավալ աշխատանքների իրականացման համար– 1 հատ
- ավտոկշեռք (30 տ) – 1 հատ
- լարորատորիա շին. հրապարակում կամ լարորատոր սպասարկման հնարավորության առկայություն – 1 հատ

7. Հետաքրքրված հայտատուների կողմից մրցութային փաթեթը ամբողջապես հայտերն կամ անգլերեն լեզուներով կարելի է ձեռք բերել ստորև նշված հասցեով գրավոր դիմում ներկայացնելու և 50,000 ՀՀ դրամ կամ 150 ԱՄՆ դոլար գումարի չափով չհատուցվող գումար վճարելու պարագում: Նշված գումարի վճարման եղանակն է բանկային փոխանցումը հետևյալ հաշվին՝

Ծահառու. «Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհներ տնօրինություն» ՊՈԱԿ  
 ՀՀ դրամի համար. Հաշիվ # 1810052104953311  
 ԱՄՆ դոլարի համար. Հաշիվ 1810001104923311  
 Հայկական զարգացման բանկ, ՀՀ, Երևան  
 Մրցութային փաստաթղթերը կառաքվեն օդային փոստով Երևանից դուրս առաքելու համար և առաքիչի միջոցով Երևան քաղաքի տարածքում: Երևանից դուրս առաքելու պարագայում տեղափոխման համար կգանձվի լրացուցիչ 100, 000 ՀՀ դրամ:

8. Հայտերը պետք է ներկայացվեն ստորև նշված հասցեով մինչև կամ 2010թ. օգոստոսի 5-ը ժամը 15:00-ը (Երևանի ժամանակով): Էլեկտրոնային եղանակով մրցութային հայտերի ներկայացում չի թույլատրվում: Ուշացված հայտերը կմերժվեն: Հայտերը կբացվեն ամմիջապես նույն օրը 2010թ. օգոստոսի 5-ին ժամը 15:05-ին (Երևանի ժամանակով) մասնակցելու ցանկություն ունեցող հայտատուների ներկայությամբ՝ ստորև նշված հասցեով:

9. Վերևում հիշատակվող հասցեն է. ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն, «Տրանսպորտի ԾԻԳ» ՊՀ, սենյակ N 312ա Պրն. Գավիթ Հայրապետյան, Գնումների գլխավոր մասնագետ  
 Հայաստան, Երևան, 0010, Նալբանդյան 28  
 Հեռ.՝ (+37410) 580523:  
 Ֆաքս՝ (+37410) 580523:  
 Էլ. փոստի հասցե՝ dhairapetyan@transportpiu.am